

ՍԱՂՄՈՍ 55

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Աղոթք դավանանների կործանման համար <u>MT ներածություն</u> Գլխավոր երաժշ- տին, նկինություն, Դավթի սաղմոսը	Ընկերների դավանանության ժամանակ վստահություն Աստծուն	Անձնական թշնամիներից ազատվելու աղոթք	Ընկերոջ կողմից դավանանված մարդու աղոթք	Չրպարտվածի աղոթք
55:1-3	55:1-3	55:1-3	55:1-3	55:1-2p 55:2q-3
55:4-8	55:4-8	55:4-8	55:4-9ա	55:4-5 55:6-7 55:8-9բ
55:9-11	55:9-11	55:9-11	55:9բ-11	55:9գ-10ա 55:10բ-11
55:12-15	55:12-14 55:15	55:12-15	55:12-15	55:12 55:13-14բ 55:14գ-15
55:16-21	55:16-19 55:20-21	55:16-19	55:16-19	55:16-17բ 55:17գ-18 55:19 55:20-21
55:22-23	55:22 55:23	55:22 55:23	55:22 55:23	55:22 55:23ա-բ 55:23գ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Մուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») *ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Մուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 55:1-3

¹Ո՛վ Աստված, ակա՛նջ դիր իմ աղոթքին

Ու իմ աղերսանքից Քեզ մի՛ թաքցնիր:

²Նայի՛ր ինձ վրա ու լսի՛ր ինձ, զանգատ անելով ողբում եմ ու խիստ խռովում,

³Թշնամու ձայնից ու ամբարշտի հալածանքից,

Որովհետև անիրավություն են վերագրում ինձ

Ու գայրույթով ատում են ինձ:

55:1-3 Սա, ինչպես և այս բաժնում շատ Սաղմոսներ, գործ ունի անձնական հարձակումների հետ: Այս Սաղմոսը հատկապես ցավոտ է, քանի որ հարձակողները ընկերներ են (տես՝ Սաղմ. 55:12-14):

Առկա են մի քանի ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԽՆԴՐԱՆՔՆ, մեկը ՀԱՅՏԱԿԱՆ, և երկուսը՝ ԸՂՁԱԿԱՆ:

1. Ականջ դիր – BDB 24, KB 27, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 5:1, 17:1, 39:12, 49:1, 54:2, և այլն
2. Քեզ մի՛ թաքցնիր – BDB 761, KB 834, *Hithpael* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՏԱԿԱՆ իմաստով, տես՝ Սաղմ. 10:1, Ողբ 3:56
3. լսի՛ր ինձ – BDB 904, KB 1151, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 5:2, 10:17, 17:1, 61:1, 86:6, 142:6
4. պատասխանի՛ր ինձ – BDB 772, KB 851, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 4:1, 13:3, 17:6, 38:15, 60:5, 69:13, 16, 17, 86:1, և այլն:
5. ես ողբում եմ – BDB 923, KB 1194, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով ա. հազվադեպ բառ, որը միայն չորս անգամ է կիրառվել, միայն այստեղ՝ Իմաստասիրական Գրականության մեջ: Իմաստը անհայտ է:
բ. JPSOA վերցնում է այս բառը որպես «հառաչել», BDB 242, տես՝ Սաղմ. 42:12, 43:5, 77:4
գ. NKJV տալիս է «հառաչել (BDB 242) բարձրաձայն» (BDB 223):

6. խիստ խռովվում եմ (բառացի՝ «բարձրաձայն՝ աղմկոտ լինել») - BDB 223, KB 242, *Hiphil* ԸՂՁԱԿԱՆ, տես՝ LXX

Սաղմոսերգուի օգնության կանչի պատճառները տրված է Սաղմ. 55:3-ում:

1. իմ թշնամու ձայնից
2. ամբարշտի հալածանքից
3. անիրավություն են վերագրում ինձ (NET Աստվածաշունչը առաջարկում է «անձրևում են», տես՝ Սաղմ. 140:10)
4. քանի որ գայրույթով ատում են ինձ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 55:4-8

⁴Միրոս խիստ ցավում է իմ ներսում

Ու մահվան սարսափներն են ինձ համակում:

⁵Վախ ու դող է եկել վրաս, ու սոսկումն է ծածկել ինձ:

⁶Ու ատում եմ. «Երանի՛ թե աղավնու թևեր ունենայի,

Որպեսզի թռչեի ու հանգիստ լինեի:

7Ահա, հեռու կփախչեի, անապատում կմնայի: Սեյա:

8Կշտապեի փախչել սաստիկ քամուց ու փոթորկից»:

55:4-8 Այս պարբերությունը նկարագրում է, թե ինչ զգացողություն ունի սաղմոսերգուն (շափազանցության լեզվով) իր հակառակորդների հարձակումներից:

1. սիրտս խիստ ցավում է իմ ներսում – BDB 296, KB 297, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, երկունքի ցավի արմատից
2. մահվան սարսափներն են ինձ համակում – BDB 956, KB 709, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 18:4-5, 116:3
3. վախ ու դող է եկել վրաս – BDB 97, KB 112, *Qal* ԱՆԿԱՏԱՐ
4. սոսկումն է ծածկել ինձ – BDB 491, KB 487, *Piel* ԱՆԿԱՏԱՐ՝ *վալ*-ով, տես՝ Եսայի 21:4, Եզեկ. 7:18

Այս վախերի ներքո նա ասում է, թե ինչ կուզեր անել, որպեսզի ազատվեր դրանցից (փոխաբերական լեզվով):

1. Երանի՛ թե աղավնու թևեր ունենայի (բառացի՝ «տայիր») – BDB 678, KB 733, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով
2. թռչելի – BDB 733, KB 800, *Qal* ԸՂՁԱԿԱՆ
3. հանգստանայի – BDB 1014, KB 1496, *Qal* ԸՂՁԱԿԱՆ
4. հեռու կփախչեի – BDB 934, KB 1221, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով
5. անապատում կմնայի – BDB 533, KB 529, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով
6. կշտապեի փախչել իմ ապաստարանը – BDB 301, KB 300, *Hiphil* ԸՂՁԱԿԱՆ՝
ա. սաստիկ քամուց – BDB 703 (միայն այստեղ)
բ. փոթորկից – BDB 704

55:4 «սիրտ» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԻՐՏԸ

❖ **«մահվան սարսափները»** Մահը սարսափելի է մեղավոր մարդկության համար (տես՝ Սաղմ. 18:4-5, 116:3), սակայն Աստված է վերահսկում մահը և այն կհասցնի մինչև իր վախճանին (տես՝ Ես. 25:8, Ովս. 13:14, 1 Կորնթ. 15:50-57, 2 Տիմ. 1:10):

55:7 «Սեյա» Տես Սաղմ. 3:2-ի գրառումը և Սաղմոսների Ներածությունը, VII.

55:8 «ապաստարան» ԳՈՅԱԿԱՆԸ (BDB 812) հանդիպում է միայն այստեղ և Սաղմ. 18:2-ում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 55:9-11

9Կործանի՛ր, ո՛վ ՏԵՐ, բաժանի՛ր նրանց լեզուները,

Քանի որ անիրավություն ու հակառակություն տեսա քաղաքում:

10Ցերեկ ու գիշեր նրա շուրջը՝ պարիսպների վրա շրջում են .

Չարություն ու վիշտ կա նրա մեջ:

11Նրա մեջ անիրավություն կա,

Նենգությունն ու խաբեությունը չեն հեռանում նրա փողոցներից:

55:9-11 Այս պարբերությունը շարունակում է Սաղմ. 55:1-2-ի աղոթքի խնդրանքը:

1. բաժանի՛ր՝ խառնիր (բառացի՝ «կուլ տուր», այսինքն՝ «կործանիր») – BDB 118, KB 134, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ. այս արմատը կարող էր կիրառվել «շփոթեցնելու» իմաստով, տես՝ Սաղմ. 107:27, Ես. 3:12, 9:16, 19:3, 28:7
2. բաժանիր նրանց լեզուները – BDB 811, KB 928, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ. սա կարող է լինել Ծննդոց 11:1-9-ի ակնարկ:

Երկունք էլ աղոթքներ են, որով սաղմոսերգու թշնամիների ծրագրերն ու հնարքներն են խաթարվում, քանդվում: Ըստ երևույթին նրանք նեղություն էին պատճառում նրան հենց իր հայրենի քաղաքում (եթե Դավիթն էր՝ ապա Երուսաղեմում): Նրանք քաղաքական ախույաններ էին:

1. Ես բռնություն տեսա քաղաքում
2. Ես կռիվ տեսա քաղաքում
3. ցերեկ ու գիշեր նրա շուրջը՝ պարիսպների վրա շրջում են
4. չարություն կա նրա մեջ
5. վիշտ կա նրա մեջ
6. անիրավությունը չի հեռանում նրա փողոցներից (բառացի՝ հրապարակից, BDB 932)
7. նենգությունն ու խաբեությունը չի հեռանում նրա փողոցներից (բառացի՝ հրապարակից, շուկայից)

Թվոց 3, 4, 5 գլուխները հնարավոր է լինեն պարիսպների վերահսկողների համար ակնարկ: Այս դեպքում հսկողները անիրավությունն ու վիշտն են:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 55:12-15
¹²Եթե թշնամին լիներ ինձ նախատողը, կհամբերեի.
Կամ եթե ինձ ատողը վրաս գոռոզանար, նրանից կթաքնվեի,
¹³Բայց դա դու էիր՝ իմ հավասարը, իմ սրտակիցն ու բարեկամը:
¹⁴Միասին քաղցր խորհուրդ ենք ունեցել
Ու խմբով Աստծո տունն ենք գնացել:
¹⁵Թող մահը հանկարծ նրանց վրա հասնի
Ու շուտով դժոխք իջնեն,
Քանի որ իրենց բնակարանների ու իրենց մեջ չարություն կա:

55:12-15 Այս պարբերությունը սաղմոսերգուի ծանոթներին ներկայացնում է որպես նրան նեղողների՝

1. թշնամին չէ որ նախատում է ինձ՝ այլապես կհամբերեի
2. ինձ ատողը չէ՝ այլապես կթաքնվեի
3. իմ դեմ գոռոզացողը չէ՝ (տես՝ Սաղմ. 35:26, 38:16, Հոր 19:5) այլապես կթաքնվեի
4. այլ դու ես՝
 - ա. իմ հավասարը
 - բ. իմ սրտակիցը
 - գ. իմ ընկերը
5. Մենք միասին քաղցր խորհուրդ ենք ունեցել
6. Մենք միասին քայլել ենք դեպի Աստծո տունը

Սաղմոսերգուն արձագանքում է այս դավաճանությանը՝

1. թող մահը հանկարծ նրանց վրա հասնի – *Qere*, BDB 674, KB 728, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
2. շուտով դժոխք իջնեն – BDB 432, KB 434, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով. *Շեղի* համար տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. Որտե՞ղ են մեռելները:
3. Նրանց դատաստանի համար սաղմոսերգուի ցանկության պատճառը՝
 - ա. նրանց բնակարանում չարություն կա (BDB 158)
 - բ. նրանց մեջ չարություն կա

Քանի որ #3 լավ չի գուզահեռվում #2-ին, առաջարկել են «բնակարանի» համար լինի շտկում՝

- գ. «սարսափով գնան իրենց գերեզմանները»
- դ. «սարսափով գնան գուրը» (այսինքն՝ «պահման վայրը» հողի մեջ)

55:14

NASB, NKJV, NRSV, REB
NJB

«ամբոխը»
«հետո անկարգությամբ նահանջում են»

Եբրայերեն բառը (BDB 921) հազվադեպ բառ է՝ ՀԿ-ում կիրառված է միայն երեք անգամ:

1. ազգերը իրարանցման մեջ են, տես՝ Սաղմ. 2:1
2. խմբով Աստծո տունն ենք գնացել, տես՝ Սաղմ. 55:14
3. անիրավություն գործողների խռովարարությունը, տես՝ Սաղմ. 64:2

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 55:16-21

¹⁶Իսկ ես Աստծուն եմ կանչելու, ու ՏԵՐՆ ինձ փրկելու է:

¹⁷Երեկոյան, առավոտյան ու կեսօրին աղոթելու

Ու բարձրաձայն աղաղակելու եմ. ու Նա կլսի իմ ձայնը:

¹⁸Նա իմ անձը խաղաղությամբ փրկեց այն ճակատամարտից, որ ինձ դեմ է,

Քանի որ շատ էին նրանք, որ ինձ հետ էին:

¹⁹Աստված լսելու է, ու հավիտենությունից եղողը

Վշտի է մատնելու նրանց: Սեյա: Քանի որ նրանք չեն փոխվում,

Ուստի Աստծուց չեն վախենում:

²⁰Նա ձեռք մեկնեց իր հետ հաշտ եղողի վրա, դրժեց իր դաշինքը:

²¹Նրա բերանի խոսքերը կարագից փափուկ էին,

Բայց սրտում պատերազմ կար,

Նրա խոսքերը յուղից փափուկ էին,

Բայց կարծես մերկացված սրեր լինեին:

55:16-21 Այս պարբերությունը նկարագրում է, թե ինչ կանի Աստված՝

1. Սաղմոսերգուի համար
2. նրան դավանանողների դեմ

Սաղմոս 55:19 նկարագրում է թե՛ Աստծուն (տես՝ տող 2, ով նստում է գահին հավիտենությունից, տես՝ Սաղմ. 45:6, 93:2, Ողբ 5:19) և թե՛ հակառակորդներին (տես՝ տող 3, նրանք չեն փոխվում): Շփոթություն է բարձրանում, քանի որ տող 3-ը կարող է վերաբերել Աստծուն (տես՝ Մատթ. 3:6, Մաղ. 3:6), սակայն այստեղ այն նկատի ունի սաղմոսերգուի թշնամիների չփոխվող չարացած սրտերը:

Սաղմոս 55:16-19ա ներկայացնում է սաղմոսերգուի աղոթքները և Աստծո պատասխանը՝

1. Ես Աստծուն եմ կանչելու – BDB 894, KB 1128, *Qal ԱՆԿԱՏԱՐ՝* կիրառված ԸՂԶԱԿԱՆ իմաստով
2. ՅԱՀՎԵՆ ինձ կփրկի – BDB 446, KB 448, *Hiphil ԱՆԿԱՏԱՐ*
3. ես աղաղակելու եմ – BDB 967, KB 1319, *Qal* ԸՂԶԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 64:1, 142:2, այս արմատը կարող է նշանակել «խորհրդածել», տես՝ Սաղմ. 119:15, 23, 27, 148
4. ես հառաչելու եմ – BDB 242, KB 250, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂԶԱԿԱՆ իմաստով
5. Նա կլսի իմ ձայնը – BDB 1033, KB 1570, *Qal* ԱՆԿԱՏԱՐ *վալ*-ով
6. Նա կազատի իմ անձը պատերազմից – BDB 804, KB 911, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿԱԳԻՆ, ՓՐԿԱԳՆԵԼ
7. Աստված լսելու է, Սաղմ. 55:19ա – BDB 1033, KB 1570, *Qal* ԱՆԿԱՏԱՐ

Սաղմ. 55:19ա-ում Աստված պատասխանելու է հակառակորդներին («տալու է նրանց այն, ինչին արժանի են» իմաստով – BDB 772, KB 851, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, այս արմատը կարող է նշանակել «պատասխան» կամ «վիշտ»: Մենք հնձում ենք այն, ինչ ցանում ենք: Սաղմոս 55:19գ-21 նկարագրում է նրանց սրտերը և գործողությունները (հավաքական «նա», տես՝ Սաղմ. 55:18բ):

1. փոփոխություն չկա (առանց ԲԱՅ)
2. նրանք Աստծուց չեն վախենում
3. նա ձեռք մեկնեց իր հետ հաշտ եղողի վրա
4. դրժեց դաշինքը՝ ուխտը
5. նրանց բերանի խոսքերը կարագից փափուկ էին, բայց սրտում պատերազմ կար
6. նրանց փափուկ խոսքերը մերկացրած սրերի պես են

Բալեր ԲԱՅԵՐԸ #2-6 ՎԱՂԱԿԱՏԱՐՆԵՐ են, որոնք արտահայտում են ատելության և ապստամբության կայուն վերաբերմունք:

55:17 «Երեկոյան, առավոտյան ու կեսօրին» Համաձայն Ծննդ. 1:5, 8, 13, 19, 23, 31-ի հին իսրայելացիների համար օրը սկսվում է երեկոյան: «Կեսօրին» խոսքը նկատի ունի ավելի ուշ ժամանակը, երբ Հուդայականության մեջ առկա էին երեք աղոթաժամեր (տես՝ Դան. 6:10):

1. առավոտյան գոհի ժամանակ (մոտ 9:00-ին)
2. կեսօրին

3. երեկոյան գոհի ժամանակ (մոտ 3:00-ին)
Անշուշտ հնարավոր է, որ այս արտահայտությունը դարձվածք է «հարատևության» համար:

55:19 «Սեյա» Տես Սաղմ. 3:2-ի գրառումը և Սաղմոսացի, Ներածություն, VII:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 55:22-23

²²Հոգսդ գցի՛ր ՏԻՐՈՋ վրա, և Նա քեզ նեցուկ կլինի .

Նա երբեք թույլ չի տա, որ արդարը սասանվի:

²³Բայց Դու, ո՛վ Աստված, նրանց կործանման գուրն ես իջեցնելու .

Արյունահեղ ու նենգավոր մարդիկ

Իրենց օրերի կեսին չեն հասնելու,

Իսկ ես Քեզ եմ հուսալու:

55:22-23 Այս փակման պարբերությունը հակադրություն է Աստծո կողմից հավատարիմ հետևորդի համար և անհավատ ընկերոջ դեմ արածի միջև:

1. հավատարիմ հետևորդը՝

ա. սաղմոսերգուն հորդորում է նրանց գցել (BDB 1020, KB 1527, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) իրենց բեռը (այսինքն՝ «վիճակը», BDB 396, միայն այստեղ է և Սաղմ. 37:5-ում) ՅԱՀՎԵԻ վրա (տես՝ 1 Պետ. 5:7):

բ. հետևել սաղմոսերգուի օրինակին՝ «ես Քեզ եմ վստահելու»

2. անհավատ ընկերները՝

ա. կործանման գուրի մեջ է իջեցնելու

բ. արյունահեղ ու նենգավոր մարդիկ իրենց օրերի կեսին չեն հասնելու

Հիշեք, որ այս Սաղմոսը նկարագրում է դավաճանության ցավը և աղոթքների բազմաթիվ գիշերներն ու հուսալքությունը անհավատ ընկերների գործերի պատճառով: Այս վերջին համարները խնդիրների պակասության համար խոստում չէ, այլ ՅԱՀՎԵԻ ներկայության և հոգատարության: Վերջում ամեն բան շտկվելու է: Մենք ապրում ենք մի ընկած, անարդար և անաստված աշխարհում: Հավատացյալները չարչարվում են և վատ վերաբերմունքի են արժանանում, սակայն կյանքը շատ ավելին է, քանի միայն այս պահի հանգամանքները:

Մի վերջին մեկնություն ևս, հայտնի չէ, թե ով է խոսում այս պարբերության մեջ, և հետևաբար, ում են նրանք խոսում:

1. քահանա կամ մարգարե է լսում սաղմոսերգուին և պատասխանում

2. սաղմոսերգուն խոսում է՝

ա. ինքն իր հետ

բ. իր ընթերցողի հետ

գ. ընկերներից դավաճանվածներին

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն գիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ովքե՛ր են թշնամիները: Ինչո՞ւ են նրանց գործողությունները սաղմոսերգուի համար այդքան ցավոտ:

2. Նկարագրե՛ք Սաղմոսերգուի զգացողությունները (տես՝ Սաղմ. 55:4-8):

3. Ինչպե՞ս է Սաղմ. 55:9-11 համապատասխանում այս Սաղմոսի հետ: Ո՞ր քաղաքը նկատի ունի:
4. Ի՞նչ խնդիր կա Սաղմ. 55:19-ը մեկնաբանելու մեջ:
5. Ձեր իսկ բառերով նկարագրեք Սաղմ. 55:21-ում խոսվող անձին:
6. Ո՞վ է խոսում Սաղմ. 55:22-23-ում և ո՞ւմ:
7. Թվարկե՛ք Սաղմ. 55:22-23-ում Աստծո գործողությունները: